

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Օտարաբարդապիտ Գրիգոր Են Եղգակի
Tiflisc. Pedaquia «Mian»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յանդարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Իշխան Գոնդուկով Կոր-
սակովի ընդունութիւնը: Ներքին Լուրեր:—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թիֆլիս: Աւստրո-Ունգա-
րիա: Նամակ Թիֆլիսից: Նամակ Թիֆլիսից:
Արտաքին Լուրեր:—ՀԱՌԱՊԵՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ՖԵԼԻՔՏՈՒՆ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՇԽԱՆ ԳՈՆԴՈՒԿՈՎ-ԿՈՐՍԱԿՈՎԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ
ԼՈՒԹԻՒՆԸ

«Навразъ» լրագիրը հաղորդում է հե-
տեւայի: Իշխան Գոնդուկով-Կորսակով շո-
րերը փոխելով վերայի զօրանցների մէջ
և հանդիսաւոր համագրեւոր հաղած՝ բաց
կառքի մէջ նստած իր ամուսնու՝ իշխանու-
հի Նադեժդա Անդրեւնայի հետ, մաս-
քաղաքը: Մտնելով քաղաքային պատգա-
մաւորութեանը, իշխանը դուրս եկաւ կառ-
քից նրան ընդունելու համար: Ա. Մ. Մա-
տիսով աղ և հաց առաջարկելով նորին
պայծառափայլութեանը, ողջունեց նրան հե-
տեւալ կարճ ճառով:

«Ձեր պայծառափայլութիւն: Առաջին
անգամ չէ, որ քաղաքը տեսնում է ձեզ իր
պատերի մէջ: Բայց շատ բան փոխվեցաւ
այդ ժամանակամիջոցի մէջ:

«Եթէ այն ժամանակ Կովկասը անվերջա-
նալի պատերազմների նշանաբան էր, այժմ
ներկայանում է նա որպէս մեծ Ռուսաստա-
նի մէջ նահանգ, աւելի ևս ծաղաւի խա-
ղաղութեան, որը այնքան անհրաժեշտ է
նրան քաղաքացիութեան ամեն ճիւղերի մէջ
զարգանալու համար: Այդ զարգացման
գործը մեր Օգոստոսիան Միապետը յանձնել
է ձեր պայծառափայլութեանը, այդ պատ-
ճառով, քաղաքային ազգաբնակչութեան կող-
մից աղ ու հացով ողջունելով ձեզ, ես ինձ

թող կը տամ ընդհանուր ցանկութիւնը
յայտելու և թող յաջողութեամբ պահպնե-
նէր պայծառափայլութեան բոլոր բարի ձեռ-
նարկութիւնները յօգուտ երկրի և քաղաքի:

Ողջունելով իշխանուհի Նադեժդա Ան-
դրեւնային, քաղաքագլուխը թարմ ծաղիկ-
ների մէջ փունջ տուեց նրան: Նոյն տեսակ
փունջ տուեց իշխանուհուն և վաճառակա-
նական ստարշինա Է. Ի. Մելիքով:

Պատասխանելով քաղաքագլխին, իշխանը
ասեց հետեւեալը:

«Ի սրտէ շնորհակալ եմ ձեզանից, պա-
րոններ, ձեր արտայայտած բարի ցանկու-
թիւնների համար և մինչև արդի խորքը
զգացված եմ ձեր ինձ ցոյց տուած բաց-
սիրտ ընդունելութեան համար:

«Կուր, ի հարկէ, կը հասկանաք այն
յուզմունքը և այն զգացմունքները, որոնցով
լցված է իմ սիրտը այն երկրի և քաղաքը
մուտք գործելու ժամանակ, որոնց հետ
կապված են իմ երիտասարդութեան և ծա-
ռայողական գործունեութեան ամենալաւ և
ամենափայլուն յիշողութիւնները:

«Կնքնակալի կամքով Կովկասի Գլխաւոր
Պետ նշանակվելով նոր պայմանների ժամա-
նակ և աչքի առաջ ունեւոր ժամանակի
պահանջած անհրաժեշտ վերանորոգութիւն-
ները, ես ինձանից չեմ ծածկում այն բոլոր
դժուարութիւնները, որոնք կապված են ինձ
փիճակով լայն և, շատ կարելի է, իմ ու-
ժից վեր խնդրի հետ: Մէկ բանի մէջ միայն
կարող եմ հաւատացնել ձեզ իմ խօսքով, որին
երբէք չեմ դաւաճանել, որ բոլոր իմ
մնացած կենքեր, ուժը և ընդունա-
կութիւններս ինձ համար մայրենի և թան-
գազին Կովկասի ծառայութեանը կը
նուիրեմ:

«Խորին յարգանքով յիշելով իւրաքանչիւր
կովկասցու համար անմոռաց իշխան Վօրոն-
ցովի յիշատակը, սրբութեամբ յարգելով այն

բարձր սկզբունքները, որ առաջնորդում էին
նրա կառավարչութեանը, և յիշելով այն
հայրական խնամքը, որով նա, իմ կեանքի
ամենալաւ տասն և եօթ տարիների ըն-
թացքում ուղղում էր իմ առաջին քայլերը
ծառայողական ասպարէզի վրա,—ես այդ
թանգազին յիշողութիւնների մէջ կորսնեմ
ուժ և ցուցուն ինձ փիճակով գործունե-
ութեան համար:

«Մի և նոյն ժամանակ, պարոններ, ես
չեմ մոռանում նոյնպէս, թէ մէկ պետի և
վարչութեան անձնական գործողութիւնները
ոչքան անզոր են առանց հասարակութեան
օգնութեան և համակրութեան: Ոչ թէ
խօսքերով, այլ յոյս ունեւ գործով զբաւել
ներ հաւատարմութիւնը: Եւ այն ժամանակ,
պարոններ, խնդրում եմ ձեզանից, չը մեր-
ժել ինձ ձեր համակրութիւնը և օգնու-
թիւնը, որոնք անհրաժեշտ են մեր Օգոս-
տոսի առ ինքն աւելի բարի մտադրու-
թիւնների համար, ի բաղդաւորութիւն և
բարօրութիւն Կովկասի, ի փառս թագաւո-
րի և յօգուտ մեր թանգազին ընդհանուր
Հայրենիքի—Ռուսաստանի: Եւ թող սիրով
աղնւութեամբ և միաբնութեամբ դիմենք
այդ բարձր նպատակներին. և թող օգնե-
մեզ այդ բանում Տէր Աստուածը, առանց
Որի օգնութեան անզոր են մարդկային ձեռ-
քերը բոլոր գործողութիւններում:

Գրանից յետոյ կրկին դիմելով քաղաքային
ներկայացուցչներին, արտասանեց հետե-
ւել խօսքերը, որոնք հիացմամբ ընդունվե-
ցան:

«Թիֆլիս գալու համար Պետերբուրգից
դուրս գալուց առաջ, Նորին Կայսերա-
կան Բարձրութիւն Կովկասեան նախկին ֆո-
խաբան յանձնեց ինձ յայտնել Թիֆլիս քա-
ղաքին իր առ ի սրտէ ողջոյնը և ամենա-
լաւ ցանկութիւնները: Եւ չը պէտք է թւեւ
ձեզ, պարոններ, Նորին Բարձրութեան տասն

և ութ տարվայ պտղատու գործունեութեան
հետեւանքները. նրանք ձեզանից իւրաքան-
չիւրի համար ակնյայտնի են, և ձեզ բոլո-
րիդ լաւ յայտնի է դէպի Կովկասը ունեցած
Նրա անկեղծ սէրը:

«Այդ պատճառով ես հաւատացած եմ, որ
բոլոր այստեղ ներկայ եղողների զգացմունք-
ներին եմ պատասխանում, Թիֆլիս մոնե-
լուց առաջ, ի սրտէ, շնորհակալական «ուրա»
կանչելով ի պատիւ Մեծ իշխան նախկին
ֆոխաբային:

«Այդ ճառից յետոյ, որը անվերջանալի
ուրաներով ընդունվեցաւ, նորին պայծառա-
փայլութիւնը, ձիւ վրա նստած, սկիտայի
և ազնականութեան ուղեկցութեամբ մաս-
քաղաքը և ամեն տեղ մեծ հիացմունքով
ընդունվեցաւ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԹԻՒՆ

Մարտի 11-ին Կովկասեան քաղաքական մասի
նոր գլխաւոր կառավարիչ, իշխան Գոնդուկով
Կորսակով մասա Թիֆլիս: Իշխանը ընդունվեցաւ
քաղաքից դուրս Մցխեթի ճանապարհի վրա տե-
ղական բարձր վարչութեան բոլոր անդամներից,
քաղաքագլխից և քաղաքային վարչութեան ներ-
կայացուցչներից: Քաղաքագլուխը ներկայացրեց
Իշխան Գոնդուկով Կորսակովին աղ ու հաց և մի
ճառ ասեց: Իշխանը պատասխանեց մի ճառով:
Այնուհետեւ նոր կառավարիչը ձի նստեց և դրո-
շակներով զարդարված փողոցներով, ամբողջ ող-
ջոյններով և ուրաներով ուղեկցած, գնաց Միոնի
մայր-եկեղեցին: Եկեղեցուց իշխանը վերադարձաւ
պալատը կառքով: Գիշերը ամբողջ քաղաքը փա-
ռաւոր կերպով լուսաւորված էր:

Ինչպէս լսել է «Մեղու Հայաստանի» լրագիրը,
Թիֆլիսի կանանց բարեգործական ընկերութեան
նորընտիր վարչութիւնը իր միջից ընտրել է վար-
չութեան նախագահ տիկին Սրբուհի Երեմեանին,
փոխ-նախագահ տիկին Մարիամ Խատիսեանին և
գանձապահ տիկին Լիդիա Թամաշեանին:

Կելու ենք: Օն ուրեմն! գնանք հոն! հոն է մեր
ապագան, տօններ սահմանադրութիւնը: Այո, ու-
տենք, խմենք, դուրսանանք, երգենք, սրտառուչ
ճառեր արտասանենք, և լաւ մը կշտանալէն ետ-
քը միաբերան աղաղակներ, կեցցէ կրկնաբար և
անդադար ազգային սահմանադրութիւն! (անվերջ
ծափահարութիւններ և կեցցենքներ):

Ամենքին յայտնի է, որ արքեպիսկոպոս տա-
ղաւոր վերին կառավարչութեան հասցրած ազգ-
անգլիացին է, սրան ապացոյց է թէ մէկը չափից
դուրս հարեւան, կասեն թէ ա լանկէ (անգլիացու
նման) հարեւ է: Այս մուլութիւնը բուժելու նպա-
տակաւ Լոնդոնում կազմված անտիարքեպիսկոպոս
ընկերութիւնների նախագահներից մէկը, վերջե-
րումս զինեմութեան վրայ չարունակ երեք ժամ
աղաղ մի ճառ է ասել. բայց ունկնդիր հանդի-
սականաց համարեա ամենքն ալ հարած լինելով,
ոչ ոք մի բան չէ հասկացել և չատելը քնել են:
Այս նախատիքից նախագահը կատարած և ծառա-
ւից բերանն էլ չորացած, ամբիւնից վար իշխանով
ծարաւը յազգեցնելու համար ուղղակի մօտակայ
զինեմութեան մտել և այնքան խմել է որ գիշերը
այնտեղ է պառկել:

Գերմանիայի նախկին լուսավորչական վարժարանաց ու-
սուցիչներից մէկը ձեռք գրաւորութեամբ այնպիսի
մի ուժգին հարուած է տուել 9 տարեկան մի ա-
շակերտի գլխին, որ ուղեղը վնասվելով, խնդհ

ՖԵԼԻՔՏՈՒՆ

Երեսփոխանական ճառի մը համառօտութիւն:
Տեաքը պատուարժանք!

Այսօր համայնքը ձեր անձնական զբաղմունք-
ները ձեր առեւտրական պարագայութիւնները թողած,
ձեր հեշտալիք զբօսանքները, ձեր Բօսֆորը, վեր-
ջագէս ձեր անձը մոտացած, խուճապանօք և ա-
րազնեթաց յայս սրբալիք եկած և գումարուած
էք ալեւոր Մայր Հայաստանի արտասուքները սըր-
բելու և նորա ցաւերը բուժելու, ամենքդ ալ ազ-
գային փրկարար սահմանադրութեան հաւատարմ
արբանեակներ, ազգութեան փառք և պարծանք
էք ֆելիքտոններ, ազաներ, և պարոններ, ամենքդ ալ
հոս հաւաքուել էք մեր թշուառ ազգին պարանո-
ցէն քաշելու և հանելու այն լուծը, այն նեղիչ և
ճնշիչ լուծը, որուն ծանրութեանը միլիոնաւոր
եզներ և գոմէշներ չեն կարող դիմանալ: Այո, տե-
տաքը, անտանելի է այդ լուծը. երանեալ է այդ
որ պիտի յաջողի այդ լուծը խզելու, բայց ցաւօք
սրտի կը յայտնեմ որ դա իմ գործն չէ: Միմյանց,
տեաքը հայկազունք, վե՛ն քաջազունք, ամենե-
քեանքդ որովք Հայաստանի էք, թէպէտ և ոչ մե-
կերիդ Հայաստանին քովէն անգամ չէք անցեր,
բայց և այնպէս հայ էք և ծանր է կրած լուծեր-
նիդ, ապա ուրեմն կեցցէք. գործիւն և ոյժ կը
բարեմաղթեմ ձեր պարանոցներուն (ընդ ծափա-
հարութիւններ):

Այո, տեաքը, ազգային սահմանադրութիւն, և-
րեսփոխանական ժողով, վարչութիւն, ընդհանուր
ժողով, յանձնախումբ, մասնախումբ, արտաքոյ
կարգի նիստ, դիւան, յանձնաժողով, մասնաժո-
ղով, խորհրդակցութիւն, բանակցութիւն, վիճա-
բանութիւն, կուրս, պատերազմ, կայծակ, դժուր,
երկներ... ո՛հ Աստուած իմ, քիչ մնաց պիտի խեղ-
դուէր... միով բանիւ սոքա բոլորը մեր գործը-
նեն և մեր դեկերն են, որոնցմով ազգը պիտի
տանկեք ի նաւահանգիստն փրկութեան (կեցցէներ
և աղաղակներ):

Այո, ինչ քառամեկուցիչ երեակայութիւն, ինչ
զարնուրելի և ստակալի մտածմունք, երբ կը յիշեմ
որ, եթէ մենք երեսփոխանքս, պոլութիւն չունե-
նայինք, զորան ողորմելի կը լինէր մեր թշուառ
ազգին վիճակը: Ինչպէս ազգային սահմանադրու-
թեան անմահ երգը ազգին համար կըսէ «նոր հո-
գի, նոր կենքը անոր պարգեւեց» մենք ալ ազգին
կենքը պարգեւեցինք, ուրեմն բարեմաղթենք նո-
րին նախախնամութեանը՝ որ նա ալ մեզ կենք
տայ, և դմեզ երեսփոխանական աթոռներու վրայ
անտասան պահէ և ու պատրիարքին նման դմեզ
չը հրաժարեցնէ, վաճա՛ղի այն ժամանակ բանե-
րին բուժած է (հաւանութեան նշաններ):

Տեաքը պատուական! ինչպէս քիչ մը առաջ
յայտնեցի, մենք ամենեքեանքս, ազգին օգուտն
ծառայող զիւցազներ ենք, բայց մեր անձնական
չափերը պէտք չէ մոռանալ: Տաճկերէն առածը
գիտե՛ք, «չալ թուան» բարձրաբերանը եւալը՝
կըսէ, որ կը նշանակէ «մեղր բռնողը մասները

Երևանում հրատարակող «Առողջապահական թերթի» 3-րդ համարը ստացվեցաւ թիֆլիսում։ Ուշագրովեան արժանի է այդ համարի մէջ առաջնորդող յօդուածը։

«Մշակի» երեկվայ համարում արտատպեցինք «Կապաշ» լրագրից պ. Գինգելշտիտի յօդուածը, որ լի է պատմական սխալներով։ Մենք տպեցինք այդ յօդուածը նոյնութեամբ, որպէս համակրական յօդուած դէպի հայերը, մի և նոյն ժամանակ ուղեկալով ցոյց տալ հայ ընթերցողին, որքան թերի, անկատար և սխալ տեղեկութիւններ ունեն եւրօպացիները Հայաստանի, հայոց ազգի և նրա պատմութեան մասին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՒԱ

Կ. Պօլից «Köln. Zeit.» լրագրին հաղորդում են մարտի 3-ից։ Անցեալ օրը գերմանական արտաքին կարգի դեսպանութեանը հրաժեշտի տեսակցութիւն և ճաշ արվեցաւ։ Ճաշի ժամանակ թիւրք կայսերական տան իշխանները նստած էին իշխան Բադիլիլի մօտ, որ նկատեց սուլթանին, թէ ինքը ամառում է կրել թիւրքաց բարձր շքանշանը, որ դեռ ևս չնորհված է կայսերական իշխաններին։ Գրանից յետոյ սուլթանը շնորհեց իշխաններին (տաս տարեկան տղաներին) երրորդ կարգի Օսմանիէ շքանշանը և հրաւիրեց իշխան Բադիլիլին յայտնել նրանց այդ լուրը։ Տեսակցութիւնը սովորական ձև ունէր, բայց նրա վերջնապէս ժամանակ սուլթանը զգացված խօսեց իր բարեկամութեան մասին գերմանական կայսրի հետ և զովեց գերմանացի աստիճանադիրներին, որոնք թիւրքաց ծառայութեան մէջ են։ Մարտի 4-ին դեսպանութեան անդամները պէտք է ուղևորվեն Բուլսա, իսկ այն տեղից Բերլին, բայց սուլթանի ցանկութեան համեմատ գեսպանութիւնը մնաց Կ. Պօլի մէջ։

Թէպէտ սուլթանը Եադիլիլիէօղլի մէջ սուլթան ճաշի ժամանակ ոչ մի խօսք չէ ասել իշխան Բադիլիլին քաղաքականութեան մասին, մինչդեռ Հիւրշեյլի հետ անդադար քաղաքականութեան մասին էր խօսում, թէպէտ իշխան Բադիլիլի ներկայ էր սուլթանի և Հիւրշեյլի խօսակցութեանը ճաշից յետոյ, այնու ամենայնիւ յամառութեամբ պնդում էր, որ դեսպանութիւնը քաղաքական յանձնարարութիւն ունի։ Թիւրք

տղան երեք օրից մնում է։ Ահա մի հրէշ մանկավարժ, որուն աւելի յարմար կը զարկըրուային թողարկումով մուրճ զորձ անել, քան թէ երկից կրթել։ Սոյն օրինակ մի դէպք էլ 30 տարի առաջ Երևանի կաթողիկէ եկեղեցւոյն բակին մէջ է պատահել։ Այն ժամանակները, այսինքն, ուսուցիչները սովի տարիներում (ներկայումս ընդհակառակը ուսուցիչներն են սոված) վարժապետը եկեղեցու ժամակույր լինելով, երեւանի նա կրթիչն է եղել, ո զիտէ ինչ էր սովորեցնում, յայտնի բան է, չով բարի քրիստոնեայք, եկազ ի սուրբ եկեղեցւոյ, ուրիշ ինչ գիտութիւն կարելի էր սպասել մի ժամակույցի, ինչպէս այն տարվայ քառասունքն էլ տէր Արապելի կասնն եղել հայերէն չը գիտնայուն համար։ Մենք դառնալով դէպքին։ Մի կիրակի օր եկեղեցւոյ բակում երեկանները ընկող կն խաղում. վարժապետ — ժամկույր վրայ համեմատ, բռնել է Գ... անունով մի երեկանային և իր պատիժ ընկող մը գլխին գանգին վրա դնելով, քարով ուղեւ է կտրել, բայց ընկողը այնքան կարծր է եղել, որ փոխանակ ջարդվելու՝ խեղճ տղին զանգը ծակել մէջն է մտել։ Տարակույս չը կայ, մահուան դուռը հասած երեկանային գլխիցը այս տարօրինակ գնաղակը՝ վիրաբոյժները մեծ դժուարութեամբ դուրս են հանել և տղան հրաշքով աղաթվել է։ Մինչև չիմայ այդ երեկան կապրի, աւելորդ է ասել որ չիմայ երեկայ չէ, չափաւս մարդ է, դեռ գլխին վրայ կրում է այս ժամակույցական վարկնի պատժոյն նշանը, ուրոնը մարդ չէ բուժնում և նմանում է

քաղաքական մի քանի շրջաններում մինչև անգամ հաւատացնում են, որ երթադրված է դաշնակցութիւն կապել Գերմանիայի, Աւստրո-Ունգարիայի և Թիւրքիայի մէջ։ Սուլթանը չափազանց պատուում է գեսպանութեանը։ Մուշիր-բէյ սուլթանի կողմից ասեց դեսպաններին. «մենք ձեզ մեր բարեկամներ ենք համարում և նորին մեծութիւնը հրամայեց ինձ կատարել գեսպանութեան բոլոր ցանկութիւնները։ Գերմանացիները պատասխանեցին, որ նրանք ամեն կերպ պատուած են և որ աւելի ոչինչ չեն կարող պահանջել։ Գերմանիան այստեղ առհասարակ հետևում է այն քաղաքականութեանը, որ գրեթէ ոչինչ չէ պահանջում և կարելութեան չափ աշխատում է չը պաշտպանել գերմանացի հպատակներին։ Երբ նորերումս այստեղ գերմանական մի ընկերութիւն հասաւ և լրագրիները ըսկեցին լուրեր տարածել, թէ այդ ընկերութիւնը ուղարկված է Բիւսարիկից գերմանական շահերը Արևելքում մեծացնելու համար, Հիւրշեյլի ընդհակառակը համոզեց ընկերութեանը չը մնալ Թիւրքիայի մէջ։ Նա ամեն անգամ այդպէս է վարվում, երբ մի գերմանացի նրանից խորհուրդ է հարցնում Թիւրքիայում բնակութիւն հաստատելու մասին։ Սուլթանը երկիւղ է կրում, որ եթէ շատ մեղմ վարվի, օտար պետութիւնները անդադար կը միջամտեն Թիւրքիայի գործերին։ Որինակ նորերումս շոգենաւները երկու ընկերութիւններին թոյլ է տուած միանալ և ակցիաներ հրատարակել միայն այն պայմանով, որ այդ ակցիաները բացառապէս Թիւրքերի վրա ծախվեն։ Գերմանիային յայտնի է սուլթանի այդպիսի տրամադրութիւնը և նա չէ հակառակվում նրա կամքին։ Այդ է գլխաւոր պատճառը, որ Գերմանիան դիւլլոմատիական մեծ ազդեցութիւն ունի Բ. Գրան վրա։ Թիւրքաց կառավարութիւնը ցանկանում է պահպանել իր ծառայութեան մէջ գերմանացի աստիճանադիրներին, նկատելով, որ Գերմանիան չէ ձգտում միջամտել Թիւրքիայի ներքին գործերին։

Աւստրո-Ունգարիայի վերաբերութեամբ սուլթանի քաղաքականութիւնը նոյնպէս փոխված է։ Սուլթանը համոզված է, որ, եթէ Աւստրո-Ունգարիան թուլանայ, համայն սլավոնականութիւնը ամենակողմաբար կը սկսի

եղել Նիւօլիսները անելված գլխի գաղաթին։ Սուրհայրը, որ մնում է, կենդանի եղած ժամանակը պարզեցնելով ասում է եղել թէ, անհաւատու զուրկ, ժամանակաւ այսպէս խտաբարոյ վարժապետներ ունենք, որ կրթել գիտէին, ախտոս, ուր են հիմի այն վարժապետները։

Մի քանի բարեկամներ տեղ մը գումարված վիճարկանում են. խօսակցութեան նիւթը քաղաքակրթութեան վրա է։ Գանկարծ թեթևասրկ մի երիտասարդ ամենքին խօսքը ընդմիջելով ասել է. «Ես ձեզ ուղիղն ասեմ, պարզապէս տեղը մի վիճարկանք, ես անկասկած համոզված եմ, որ քարիկ չը գնացողը քաղաքակրթութեան վրայ մի գաղափար չունենալուց դատ, ըստ իս այն մարդը էլ է։

Ունկնդիրները մի ծերունի հետեւալ հարցումն է արել երիտասարդին։

- Կուք քարիկ եղած էք, պարոն։
- Ինչպէս չէ, ուսումս այնտեղ աւարտել եմ։
- Իսկ ձեր հայրը քարիկ եղած է։
- Ոչ...
- Ուրեմն իշու գաւակ էք։

(Տեսարանն է Թիֆլիսում)

Տեսիլ ա.

Հայրը (կանտորում, առանձին)

Անիծեալ լինէր այն օրը, որ ես ամուսնացայ, այսպէս անառակ, անդամ գաւակ ունեցայ. ես

ոչնչացնել Թիւրքիային։ Այդ հիման վրա ամենակիստ հրամաններ են տուած և կարգադրութիւններ են արված, որ այլանցիները չը մասնակցեն Հերցեգովինայի ապստամբութեանը։ Գերվիշ-փաշա պատրաստվել էր հեռանալ Ալբանիայից, բայց նրան հրաման տրվեցաւ մնալ այնտեղ և ամեն միջոցներ դորձադրել, որ այլանցիները չը մասնակցեն հերցեգովինացիների ապստամբութեանը։ Այդպիսով Բ. Գուռը արգելքներ է դնում Հերցեգովինայի ապստամբութեանը և աշխատում է, որ նա ճնշվի։

ԱՌՍՏՐՈ-ՈՒՆԳԱՐԻԱ

Վիեննայից «Tages» լրագրին գրում են հետեւեալ մարտի 7-ից։ Վիեննայի պաշտօնական «Abendpost» լրագրի մէջ տրված համակրական յօդուածներէրց՝ Սերբիան թագաւորութիւն յայտնելու մասին, երևում է, որ աւստրիական կառավարութիւնը բարեկամաբար վերաբերվեցաւ Բէզրադի մէջ կատարված անցքին։ Պաշտօնական լրագրից իր յօդուածներով մասնացոյց է լինում այն քաղաքականութեան վրա, որին հետեւել է Սերբիան վերջին ժամանակներում և այդ հանգամանքը բացատրում է Աւստրո-Ունգարիայի համակրութիւնը դէպի սերբիական պետական փոփոխութիւնը։ Ինչպէս յայտնի է, Սերբիայի այդ քաղաքականութիւնը նպաստաւոր է եղած Աւստրո-Ունգարիայի համար։

«Polit. Corresp.» լրագիրը իր երեկվայ պաշտօնական հաղորդութեան մէջ Բէզրադից ուղղակի յայտնեց, որ սերբիական սկուպչինայի որոշումը անսպասելի չէր և չը դարձնեց եւրօպական պետութիւններին։ Գեռերկու տարի առաջ, երբ իշխան Միլան այցելեց աւստրիական կայսրին Վիեննայի և իշխ մէջ, Աւստրիայի համար դադանի չէր, որ իշխան Միլան սաստիկ աշխատում էր Սերբիան թագաւորութիւն դարձնելու համար։ Այն ժամանակն էլ այստեղ ոչ ոք չէր կասկածում, որ իշխան Միլան սաստիկ ցանկանում էր բարեկամական յարաբերութիւններ հաստատել Աւստրո-Ունգարիայի հետ։ Բայց չը նայելով այդ ցանկութեանը, նա քաջութիւն չունեցաւ ձեռնարկել այդ գործին։ Այն րոպէից, երբ Աւստրիային երկրորդ անգամ այցելելուց յետոյ իշխան Մի-

լան հետեւեց բարձուն Հայմերլէի եռանդոտ խորհուրդներին և հեռացրեց Ռիտիչին, Սերբիայի և Աւստրո-Ունգարիայի յարաբերութիւնները մի անգամից փոխվեցին։ Այդ ժամանակից Սերբիան այնքան անգամ ապացուցեց իր բարեկամութիւնը դէպի Աւստրո-Ունգարիան և իր անկեղծութիւնը դէպի այդ պետութեան շահերը, որ շատ բնական է թէ աւստրիական կառավարութեան և թէ ժողովրդի համակրութիւնը դէպի այն փոփոխութիւնը, որ կատարվեցաւ Սերբիայի մէջ։ Հաւատացնում են, որ աւստրիական կայսրը իշխան Միլանի թագադրութեան հանգիսին ներկայ գտնվելու համար արտաքց կարգի դեսպանութիւն կուղարկի Բէզրադ։

Առ ժամանակ գաւառական լրագիրները միջոցով պ. Գադստուն յիշեցրեց Աւստրիային, որ նա չէ մոռացել իր բացականչութիւնը «հեռու ձեռքերը»։ Յիշեալ լրագիրները յայտնեցին, որ Գադստուն դիտաւորութիւն ունի հարց բարձրացնել Հերցեգովինայի և Բոսնիայի գործը եւրօպական պետութիւնների քննութեանը ենթարկելու մասին։ Անգլիական հրապարակախօսները հիմնվում են Բերլինի դաշնագրի 25-րդ յօդուածի վրա, որի մէջ ուղղակի ասված է, թէ յիշեալ նահանգները միայն ժամանակաւորապէս գրաւված են Աւստրիայից և ոչ թէ նրա հետ միացրած, ուրեմն եւրօպական պետութիւնները կատարեալ իրաւունք ունեն հակել այդ երկրի մէջ մտցրած վարչութեան և կարգ ու կանոնների վրա։ Այստեղ կարծում են, որ Գադստուն կամենում է վերստին լինել Աւստրիայից և Գերմանիայից այն դիրքի համար, որ նրանք բռնեցին Անգլիայի և Ֆրանսիայի դէմ եղիպական հարցի վերաբերութեամբ։

ՆԱՄՄԱԿ ԹԻՒՐԻՒԱՅԻՅ

Կ. Պօլիս, 1 մարտի 82

Թիւրքաց Հայաստանի բարենորոգմանց անսահմանապէս յետաձգուելը մեծ փաստ մը եղած է այս միջոցին հայ քաղաքագետ Էփենդիսնու ձեռքը, հաստատելու համար թէ ի սկզբան ձախող կերպով ճանապարհ ելան ամեն անոք՝ որք ուղեցին բուրբուլին թիւրքին յուսահատուելով, միջազգային խնդրի մը ընել դաշն։ Քիչ մը աւելի յառաջանալով իրենց փաստաբանութեան մէջ կը սնդոն նաեւ, ամեն հաւանականութեանց դէմ, որ ճիշդ հայը զայն միջազգային խնդրի մը ընելուն

Հայրը (յուսահատած)

Ծուտ, բիշի կանչեցէք, չուտ... բիշի... սն Աստուած իմ... դաւախ մեռնում է։

Տեսիլ դ.

Հայր, որդի և բիշի

Բիշի (վիրաւորեալ քննելով)

Մարմնին վրայ վերջ չեմ տեսնում։

Հայրը (չուսարած)

Ինչպէս չես տեսնում, որտի մէջն է դընտակը։

Որդին (վեր կանգնելով)

Ներք հայր իմ, արորճանակիս մէջ դնտակ դնելու մոռացել էի։

(Բարոյական)

— Դու այսօր վարժատունն չես դնացել, սրիկայ։

— Վարժատունն էի, հայրիկ, Աստուած վկայ վարժատունն էի. խաչը վկայ, Գրիստոս վկայ, երկու աչքս կուրնայ, իմ արեւ, քո արեւ, մօրս արեւ վարժատունն էի։

— Այ անիրաւ, սուտ տեղը երգում էլ կանես։

— Հայրիկ, դու էլ կանտորում ամեն օր սուտ ես խօսում, երգում ես անում։

— Կա ջուլ բան է. փող աշխատելու համար պէտք է մարդ խաբել, հաւատացնելու համար երգում անել, եթէ չը գիտես սովորել։

Կրօ

Նեմացաւ և իշխանը, ինչպէս ասում են, ուղղակի
բանգատով դիմեց ուստայ թագաւորին, և մի
տոյն ժամանակի դրաւոր ազացոյցներ ներկայա-
դրեց, որոնցից երեսուն էր թէ հեղատուօր կարգի-
ւորի ամեն բան քարուքանդ անող տարրերի հետ,
որոնք արգելք են լինում ներկայ կարգերի հա-
ռատութեան Բոլորարիւցում: Ինչպէս երեսուն է, իշ-
խանը վստահացաւ այդ քայլն անել ուստայ թա-
գաւորի նրան ուղարկած նամակի ազգեյություն-
ական: Սօֆիայում լուր է տարածվել, որ իբր թէ
ուստայ կառավարութիւնը իշխան Ալեքսանդրին
բարդին խստացել է յետ կանչել Խիարոօթին, բայց
պէտք է կարծել, որ այդ լուրը վաղաժամանա-
կեայ է:

— Իբր լինի «Tageblatt» լրագիրը հաղորդում
էր գեներալ Սիբորեւի, նորերումս վարչակալու-
մանցինքն ժամանակի, բացի այն ձառից, որի բա-
նադակութիւնը «Czas» լրագիրը հաղորդեց, կըր-
դել դիմեց և սեղական ուստայ օֆիցէրներին հե-
ռեկայ խօսքերով: Եթէ օտարազգիները մեղադրու-
ն են ինձ դատարկ շատաստութեան մէջ, բայց դուք
լիա՛հէք, որ ես ձառերի պէտք մարդ չեմ, այլ դու-
րեք: Իմ հասակումս մարդիկ չեն ասում այն բոլո-
րը, ինչ որ դուքը կը փշի: Բոլորը, ինչ որ ես
ասում էի, մտածված էր, և իսկապէս, ոչ մէկ ճշշ-
արեալ ուստայ կարող ուզել կարծիք ունենալ
մ'ասածի դէմ: Բայց դուք համոզված եք, պա-
մանհետ, որ մեր կայսրից անելի լաւ ուստայ
է թէ: Ես կանչված եմ արտասահմանից, դա
չ'ալ ինչ է, եթէ ոչ նոր ստորութեան, որի
կատճառն է մէկ ախայիսի մարդ, որը արեան և
րկակնի միջոցով ստեղծեց մի կայսրութիւն, որ
կարող է քանդուի, նոյնպէս արեան և երկաթի մի-
ջոցով, Ռուսաստանի ձեռքով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամսոյս 14-ին, կիրակի, սուրբ պատարա-
զից յետոյ ԶԻԿՆԵԱՆՑ եկեղեցու
գաւթում գանուած շինութեան մէջ և
կատարուի ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՋԻ
և ՏԱՐԲԱԿԱՆ ՏԻՍՈՒՄ-
ՆԱՐԱՆԻ բացման ՀԱՆԴԵՍԸ: Այս
մասին պատիւ ունեմ յայտնել զաստիարա-
կութեան գործին համակրողներին:
Թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանց
2—2

Ա. Ս. ԾՈՒԻՆՈՎԻ և ընկերութեան դե-
ղական պահեստը պատիւ ունի յայտնել, որ
այսուհետեւ առևտուրը կը կատարվի հե-
տեալ ֆիրմայով. ԳԵՂԱՏԱՆ ԱՊ-
ՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵԻՏՐԻ ԿՈՎ-
ԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ («КАВ-
КАЗСКОЕ ТОВАРИЩЕСТВО ТРГОВЛИ АП-
ТЕКАРСКИМИ ТОВАРАМИ»), որի կանոնա-
գրութիւնը ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատութեմ է
ներկայ 1882 թ. յունվարի 29-ին: Ընկե-
րութեան պահեստը գտնվում է Խիտարովի
տանը, Թանգարանի դէմէ:
2—7 (եր. և ուր.)

Պատիւ ունեմ յայտնել որ իմ նոր բա-
ցած ՖԱՐԲԻԱՅՈՒՄ լաւ ԾԱԽՈՏԻ սիրողնե-
րը և գործածողները կը գտնեն

ԸՆՏԻՐ ԾԱԽՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ
Մաքուր թիւրքաց, ամենալաւ տեսակնե-
րի ծխախոտից, առանց որ և է խառնուրդի:
Ես երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծը-
խախոտը կարող է բաւականացնել ամենա-
ընտիր ծաշակին: Ծխախոտի գինը, ֆունտը
3 ռուբլուց մինչև 10 ռուբլ, իսկ պապիրոս-
ները 100 հատը սկսած 1 ռուբլուց, մինչև
3 ռուբլ:

Գործարանս գտնվում է 3-որդ բաժնում
Հեռագրական կայարանի մօտ, իսկ մագա-
զինա Արծրունու գալլերէում, Գլորցովի փո-
ղոցի վրա, № 3.

Պարտք եմ համարում այն էլ աւելացնել
որ իմ ֆաբրիկայի արդիւնաբերութիւնները
կը ծախվին միմիայն իմ մագազինում:
Գործարանատէր ՇԱՀԻՆԵԱՆՑ
5—25

ՎԻԵՆԱՅԻ ԱԹՈՒՆԵՐ
36 ՐՈՒԲԼ
ԵՒ ԾԱՌԱՐԵԱՆՑԻ ԳԷՂՈՅԸ
3—20

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՁԵՒ ԶԱ-
ՏԻԿ զլտարներ 1 ռ., ֆուֆայկաներ 2
ր. 75 կ., բրեւիներ 4 ռ., բիշակներ 8 ռ.
ամբողջ հագուստ 13—19 ռ., դրապ, մա-
հուդ, արիօ, սրբիներ և արթմներ կէս
գնով: Հնդկական բրինձ 6 կ., սագօ և պեր-
լույցա կրուպա 9 կ., պանիր չեստեր 70
կ., նշապայ կոյմանի 18 կ. ֆունտը, լուծո-
ղական ձեթի պիլիւններ 2 կ., լուացքի փո-
շի 5 կ.: ՆՈՐՈՒԹԻՒՆ: Մեղրամամ և
արծաթէ մամեր 35 և 42 կ. ֆունտը: Մեծ
քանակութեամբ անգլիական և ֆրանսիական
մահճականներ 30% էժան քան թէ ուրիշ
տեղ, այսինքն երեկանների համար 4 ռ.,
մեծերի համար 12 ռուբլուց: ԻՍԿԱԿԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:
31—36

ԱՆԱՆՈՎԻ և ԿԱՅԱՆՈՎԻ պապիրոսների
թղթի գրքոյները գործարանը ԲՈՍՏՈՎ
(Կօնի վրա) քաղաքում հարկաւոր է հա-
մարում պ. պ. գործածողների և գնողների
ուշադրութիւնը գործնել ֆրանսիական
Abadie թղթի վրա մեր ստորագրութեամբ,
Abadie գրքոյը, 300 թերթերով արժէ
10 կ., իսկ 150 թերթերով արժէ 5 կոպէկ:
Գործածողները առանց որ և է զժուարու-
թեան կը համոզվեն, որ սա հէց այն
թուղթն է, որը Кронъ-ի ստորագրութեամբ
միշտ ծախվում էր և այժմ ևս ծախվում
է շատ թանգ, այն է 300 թերթանոց տես-
րակը ծախվում է 15 կոպ., իսկ 150 թեր-
թանոցը—7 կոպէկով: Բացի ուրիշ լաւ
թղթերի մեր ստորագրութեամբ ունենք և
ամենալաւ ՄԱԽՍ (240 թերթը—5 կոպ.),
որը կարելի է ստանալ եւրոպական Ռուսաս-
տանի բոլոր ծխախոտաւաճառների մագա-
զիններում: մենք հակերով ենք ծախում
(գտնէ ոչ պակաս հինգ կարօրկաներից):
7—10

ԾԱԽՎՈՒՄ Է ՎԵՐԻՆԵ-ՄՈՍԿՈՎՍԿԱ-
յա փողոցի վրա ԵՐԱՅԱՐԿԱՆԻ ՏՈՒՆ № 13,
22 և 24 ՊՐԻԿԱՋԻՆ, 5,000 ռ. պարտ-
քով: Տունը անկիւնի վրա է երկու փողոց-
ների կողմը, յարմար է առևտրական հիմ-
նարկութիւնների համար: Գնի մասին կա-
րելի է տեղեկանալ նոյն տեղը ՏԱՆ ՏԻՐՈ-
ՋԻՑ:
1—4

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ՎԵՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀԵՏԱՐՈՒՄ
ВЪ Складѣ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
Արժանաւ. գալլերէում № 144 ԾԱԽՎՈՒՄ Է արժան գնելով ՎԻԵՆԱՅԻ
Տանա ֆաբրիկայի ամեն տեսակ ՄԵՐՈՎ, նոյնպէս խաղաղի ԿԱՐՄԱՐՈՒՄՆԵՐԸ:
ՀԱՅՏԻՆՆԵՐԸ և ՇԱԽԻՆՆԵՐԸ:
1—60

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆ
ԿԻՐԱԿԻ, 14 ՄԱՐՏԻ
Պալատական արախտ Նո-
րին Մեծութեան Նասր-
Էշ-Կին պարսից Շահի
ԲՈՒԲԻՏ ԼԷՆՑ
աշակերտ և ազգական նը-
շանաւոր պարսիկ կախար-
դի, Մահոմեդ Իզմայիլի
Բէյի պատիւ կունենայ
2—2



ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿՐԵԴԻՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Վարչու-
թիւնը պատիւ ունի յայտնել ընկերութեան պ. պ. անդամներին, որ ներկայ մարտի
14-ին նշանակված ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը տեղի կունենայ Թիֆլի-
սի Ժողովարանում ժամ 10-ին առաւօտեան:
ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ
1) Գննութիւն և վաւերացում վարչութեան հաշւեցոյցի 1881 թւի համար և նա-
խահաշի 1882 թւի համար:
2) Զեկուցում վերահսկողական յանձնաժողովի 1881 թւի հաշւեցոյցի քննութեան
մասին:
3) Խորհրդի գեկուցումը իր գործունէութեան մասին:
4) Վերաքննութիւն 1881 թւի ընդհանուր ժողովներում ընդունված փոփոխու-
թիւնների և աւելումների կանոնադրութեան §§ 12, 32, 33 և 42 և կանոնադրու-
թեան մէջ մտցրած նոր պարագրաֆների պէնսիոնական դրամադրի մասին ծառայող-
ների համար:
5) Ընտրութիւն ընկերութեան խորհրդի գեկուցատի, փոխանակ հերթով դուրս
եկող խորհրդի նախագահ, Վ. Ի. Կայդանովի:
6) Ընտրութիւն ընկերութեան գործերի կառավարչի, փոխանակ հերթով դուրս ե-
կող Գ. Գ. Աղէկանովի:
7) Ընտրութիւն վերահսկողական յանձնաժողովի երեք անդամների և երեք կանգի-
բանների:
Վարչութիւնը խնայարար խնդրում է ընկերութեան պ. պ. անդամներին, ներ-
կայացնել ժողովի դահլիճը մանկել իրանց անդամական վկայականներից կոպիտերը:
Ցպված հաշւեցոյցը կարելի է ստանալ ընկերութեան վարչութեան մէջ, սկսած մարտ ամ-
սի 8-ից:
3—3 (6, 10 և 13)

ՄԻՋԻ ԲՈՂՈՑ, ԿԱԹՕԼԻԿԵԱԿԱՅԱ ԲՈՂՈՑԻ ԱՆԿԻՆՆ Ձ 13.
Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆԱՅԻ ՄԵՐՈՎ, ամե-
նայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրակաւոր 8—30 ռ., չա-
մադաներ 250—25 ռ., սակօյաժմներ 1. 30—12 ռ., սուսն գուռ կնէր Զա-
նապարհի 6—35 ռ., մարաններ (погребцы) 6—25 ռ., սա մօ վարն եր
60 կ.—1.25 ֆունտը, կուսմանի պղնձ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով
ամաններ, ու մի վալ ի կնէր մրա մօ ռնի 38 ռ.—75 ռ., հրացաններ
երկու լույանի 6—32 ռ., ու վոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30
ր., պատաններ. (զուլաններ) ըէօլվէրի, սիգար Բէնգարդի ֆաբրիկից, պապի-
րոս և թամբաքու կուշնարովի գիլլի պապիրոսի, 5,000 ՖՈՒՆՏ ԹԵՑ (չայ) ԵՂ.
ՊԱՊԱՎՆԵՐԻ, բիսկիտ, (սուսար չայու և կաֆէի) Ելնէմի. կօֆէ Ելնէմի և
Միլէյսօնի. Պետերբուրգու 40—1 ռ. 25 կ. հայելներ ամենայն տեսակ
28 կ.—240 ռ., պրօբկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի (Два
зельтерскихъ водѣ и пива) զուլվուկ (пучк), պարնոսներ սամովերի և
չայու, դանակ չանդայ գանազան ֆաբրիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դոմֆեր.
գրչակթներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ռ., դա-
նակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուսմանի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր.
միս կարելու մաշկնայ. Անգլիական ու թմնր, բրիտանակի չայիկներ, կաֆէի-
նիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—Չուր մաքրելու,
կրակաւ կարօրէն 18 կ., վաքս Ֆրանսիայի ժակը, թուղթ փողտի, կանկերա-
ներ, սուրղուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակթ, քարտախաղի, թանաք,
թանաքամաններ, պրեսպապիկներ, դրալներ սեղանի և չայու ֆրաժէ, վաքալի
և բրիտանակի դոմֆեր 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չու-
միչէք 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. Չուխտ, պո-
սապոլաններ վարչալու, Ռեձիւնի ԿԱՆՏԵՐ, ամեն տեսակ, գուլքաններ կա-
նանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Չուխտ, շապիկներ, մարդկերանց գալուս-
տիկներ, գոնաիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեկի և շաքի, սանդղի շի-
մայու ոսկորէ, գուտապիլիքով և փայտէ, շոտլանդի գլի, շորի, սապոկի, պոլի և
կարտի համար. չուլթի թէլ (бумага) մատիկի կօճի և շալէ (гарусь) ֆէ-
շառիչք մարդկերանց և կանանց, պորտամաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ
և մանր գոլանտերեյնի ապրանքներ, սպայտ ամեն տեսակ 3 կ.—30 կ.,
կտոր, հոտալէտ ջրեր, պուզրա, Գլիցերին ջրի քացախ, հոտալէտ պարաշոկներ
ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:
Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապ-
րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ ՆԵԿՈՎՈ-
ՍԵԱՆՑԻ պահեստում. (ВЪ Складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի ան-
կիւնում № 13:
Օտարաքաղաքացի կարող են դիմել հետեւեալ հասցեով. Тифлисъ Ми-
хаилу Н. Теръ-Никогосову.
11—180
ՄԻՋԻ ԲՈՂՈՑ, ԿԱԹՕԼԻԿԵԱԿԱՅԱ ԲՈՂՈՑԻ ԱՆԿԻՆՆ Ձ 13.